

Հին ժամանակներէն ի վեր գրեթէ նոյն ձեւն ունեցեր են ՉՐԵԼԻՆ ԿԱՄ ԳՐՉՍՀԱՏ ԴԱՆԱԿԸ (Rosaria) եւ ՔԵՐԻՉԸ (scalpra) :

ԿԱՐԿԻՆԸ, ՄԿՐԱՏԸ եւ ՅՂԿԻՉԸ կը պահեն եղեր ԿԱՂԱՄԱՐԻՆ կեց ETUI-ին (աիվիա) մէջ :

«Անտղատի Սուրբ Կիլիօմ» վանքին մէջ բոլոր նորընծաներուն համար կանոն էր, որ հետները բերէին՝ երկու գրասեղան, զգրոցները լիքը հարկաւոր գործիքներով : Այսպէս էր նաեւ Շարդէօ վանքին մէջ : Գործիքները բաղկացած էին հետեւեալներէն՝ մէկ զրիչ, մէկ զրչաճատ, մէկ կտոր կաւիճ, մէկ կարկին, մէկ ծակող սրածայր երկաթ, մէկ սղորկ տախտակ մագաղաթին երեսը տողաշարով նշանակելու համար, մէկ կանոն կամ տողաշար, մէկ սրածայր գաշուռիկ, կապար, սեղանիկներ, երկու սափրիչ կամ քերիչ դանակ եւ երկու թանաքաման» : (Lecoy, p. 45)

Հին ժամանակներ թԱՆԱՔԱՄԱՆԸ եղեր է հասարակ կաւեղէն բուլիլածեւ : Հարուստներ ունեցեր են ոսկիէ, արծաթէ, պղնձէ, ձինջեւ իսկ քանդակազարդ եւ զոհարար թանաքամաններ :

ԹԱՆԱՔԻ բաղադրութիւնը հին հոմոսյեցիներու մօտ եղեր է մուրէ, խէժէ եւ ջուրէ :

Պիլինիոս գիտէ եղեր որ այս բաղադրութիւնը մի քիչ քայքայով աւելի հաստատուն անջնջելիութիւն կ'ունենանայ : Անոր ժամանակ ծանօթ էր նոյնպէս սեպիայէ պատրաստուած թանաքը, ինչպէս նաեւ հնդկական քամաքը, որ նման էր չինական քամաքին :

ԺԱ. դարուն, Թէօֆիլ անունով մէկ վանական կ'ըսէր — զրիչներ կը գործածեն եղեր մէկ թանաք, որ բաղկացած էր ջուրէ, զինիէ եւ epine փայտէ ստացուող մուրէն :

ԺԱ. դարէն վերջ գործածեր են sulfate de fer եւ la noix de galle եւ զղթոր : Այս թանաքը ժամանակի ընթացքին կարծրացեր է եւ ստացեր է կարծրաչէկ գոյն մը :

Գրչակեղծիքին ամենապատուականը տուող Հայեր, որոնց զաւակներ անյիշատակ ժամանակներէն դեռ ԿԱՊ եղեր են մշակոյթի երկիրներու մէջ անշուշտ գիտէին այս ամէնը եւ աւելին...*) :

Մեր հայ գրչագիրներու մէջ հրաշալիօրէն պահուած է թանաքի գոյնը, թէեւ ինձ յայտնի չէ թէ ինչպէս պատրաստեր են զայն մեր վարպետ նախնիք, բայց չեմ մոռցեր հետեւեալը .

*) Գրչագիրներու գեղարուեստին համար հնճարկը ամէն սարք ու գործիքներու պատկերներ եւ իմ ձեռք արտադրած եւ նկարած եմ էջմիածնի գրչագիրներու ոմանց մէջէն (դեռ 1918-ի սեւ տարին) հաւաստացած որ օր մը անոնք լոյս պիտի ընծայուին... :

«Դեղ գրոց» է «զղթոր, արջասպ եւ կոխզ» . իսկ «նիւթ պատկերաց» «կաթն եւ ձու, զառիկ, լաժուրթ, ժանդառ, բուռ, կիր եւ այլ որ նրման սոցին» : (Վրթան. քերթող, «Յաղագս պատկերամարտից) :

Հիները կը գործածէին նաեւ բոխրած հող եւ sanguine անունով յայտնի արիւնագոյն ներկը :

Մանրանկարիչներ իրենց գոյներու անջնջելիութիւնը ապահովելու համար խառնեւ են՝ բացի սպիտակ կուշը՝ նաեւ խէժ եւ հաւկիթի սպիտակուց :

ՈՍՎԻՆ, ամենանուրբ փոշիի վերածած, հեղուկացուցած են խէժային կրծիչ կամ կըպչաններով :

Իսկ ոսկիով ծածկելի մասերուն վրայէն՝ առաջ քան այդ գործողութեան ձեռնարկելը՝ անցել են սիմապը կամ քաւմիւն կարմիրով, որը կ'օգնէր ոսկիի ամուր կպչելուն եւ փայլելուն :

Գրչագիրներու զարդին կեդրոնական էջերը բռնող երեսներու վրայ մաքուր զուտ ոսկին փոռած է անխնայ առատութեամբ : Կան զբրչագիրներ, որ ծայրէ ծայր ոսկիով գրուած են :

Հայ գրչագիրներու մէջ՝ Հեթում թագաւորի Աստուածաշունչին (որ կը գտնուի էջմիածնի հարուստ հաւաքածոյին մէջ) բոլոր զլիստատները եւ Աստուած բառը իր բոլոր առումներով անխախտ ոսկիով են գրուած :

Ոսկին եւ արծաթը, որ հեղուկ վիճակի մէջ անհնարին էր գործածել բեկրեկուն պապիրոսի վրայ, առատութեամբ կը տարածէին մագաղաթի վրայ, որ գերազանցօրէն ընդունակ է բռնել եւ պահել ամէն մէկ վրձինով կատարուած աշխատանք :

Գրիստոնէութեան շրջանին ոսկի տառերով գրչագիրը կամ ոսկետառագիրը վերապահուեցաւ միայն «սուրբ գիրքերու» համար : ԱՐՄԱԹ տառը նուազ գործածուած է պարզապէս այն պատճառով, որ այս մետաղը կը սեւնայ ժամանակի ընթացքին :